

## Սերժ Սարգսեան ընտրուեցաւ ՀՀ վարչապետ կողմ քուէարկեց 77 պատգամաւոր



Ազգային ժողովին բաց քուէարկութեամբ ՀՀ վարչապետ ընտրուեցաւ Սերժ Սարգսեանը: Անոր օգտին կողմ քուէարկեց 77 պատգամաւոր, դէմ՝ 17: Նշենք, որ վարչապետի ընտրութեան համար կը պահանջուէր 53 ձայն: Անոր թեկնածութիւնը առաջադրած էր իշխող կոալիցիան՝ ՀՀ Ազգային ժողովի Հայաստանի Հանրապետական կուսակցութիւն եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն խմբակցութիւնները: Ըստ Մահմանադրութեան՝ Հանրապետութեան նախագահը անյապաղ վարչապետ պէտք է նշանակէ Ազգային ժողովին կողմէ ընտրուած թեկնածուն:

## ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմնի Յայտարարութիւն

Վերահաստատելով 2016 թուականի փետրուարի 24-ին կնքուած քաղաքական համագործակցութեան մասին համաձայնագրով եւ 2017 թուականի մայիսի 11-ին քաղաքական քաղաքական կազմաւորելու մասին յուշագրով ամրագրուած ռազմավարական նպատակներին եւ քաղաքական առաջնահերթութիւններին իր հաւատարմութիւնը՝

- Նկատի ունենալով, որ 2017 թուականի ապրիլի 2-ին կայացած խորհրդարանական ընտրութիւններին արդիւնքներով եւ քաղաքական քաղաքական յուշագրով ՀՀ-ին է վերապահուած վարչապետի թեկնածու առաջադրելու իրաւունքը,
- Հաշուի առնելով ՀՀԿ խորհրդի որոշումը վարչապետի թեկնածու առաջադրելու մասին՝

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինը հաւանութիւն է տալիս Սերժ Սարգսեանի թեկնածութեանը:

Նոր սահմանադրութեամբ սկսուած համակարգային փոփոխութիւնները արդէն իսկ որոշակի դրական սպասումներ եւ որակական տեղաշարժեր են արձանագրել: Թէեւ մեր երկրում առկայ են բազմաթիւ լրջագոյն մարտահրաւէրներ եւ լուծում պահանջող խնդիրներ, սակայն վերջին երկու տարուայ ընթացքում արձանագրուած որոշակի յաջողութիւնները յուսադրում են, որ ընտրուած ճանապարհը ճիշդ է:

Պետական եւ հասարակական կեանքում բեկումնային փոփոխութիւններ կատարելու ուղղութեամբ առարկայական քայլեր ձեռնարկելու հասարակական պահանջ եւ ակնկալիք է ձեւաւորուել, ինչը պարտաւորեցնում է բոլորիս:

Մենք գիտակցում ենք, որ յանձնառութիւն եւ պատասխանատուութիւն ենք ստանձնել նոր որակի իշխանութիւն ձեւաւորելու, հասարակութեան մէջ պետութեան եւ ապագայի հանդէպ վստահութիւն ստեղծելու, առաջնացիկ զարգացում, ընկերային արդարութիւն, մրցակցային հաւասար պայմաններ ապահովելու հարցում եւ վստահ ենք, որ յաջողելու ենք:

ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆ

## Օնթարիոյ կառավարութիւնը 3 միլիոն տոլարի խոստում կը կատարէ Թորոնթոյի Հայ կեդրոնի համալիրի ընդարձակման ծրագրին



Ապրիլ 13-ին, Թորոնթոյի Հայ կեդրոնին մէջ կայացած ընդունելութեան մը ընթացքին, Օնթարիո նահանգի կառավարութիւնը յայտարարեց, որ յանձնառութիւն կը ստանձնէ 3 միլիոն տոլար նուիրելու Թորոնթոյի Հայ կեդրոնի ենթակառոյցի ընդարձակման ծրագրին:

Նշենք, որ Հայ կեդրոնը Օնթարիո կառավարութեան ուղղութեան յայտնած էր, որ վերջին տասնամեակին Թորոնթոյի Հայ համայնքի ուժեղացման պատճառով անյետաձգելի անհրաժեշտութիւն կը զգացուէր Հայ կեդրոնի համալիրի ենթակառոյցը ընդլայնելու: (Լուսանկարները՝ Իշխան Ղազարեանի):



Երեւանի Ֆրանսայի Հրապարակին վրայ ցոյցեր. Հանրահաւաքի մասնակիցները մտան հանրային ձայնասփիւռի կայան: Կարդալ էջ 4

**2018 PILOT** MSRP STARTING FROM \$40,390\*


**HONDA GABRIEL**

7000, boulevard Henri-Bourassa E.  
Montréal-Nord, QC H1G 6C4  
**514 327-7777**  
www.hondagabriel.com

Kevoak Asadourian  
Vahan Vartanian  
Haig Khobassarian

**HONDA**

Les saveurs de la méditerranannée...  
le bon goût du partage !



Suivez-nous !



[www.groupeadonis.ca](http://www.groupeadonis.ca)



MARCHÉ

ADONIS

# Գործող Յարացույցը Եւ Մենք

Հայաստանի քաղաքական բեմի ներկայ իրականությունն ճշգրիտ բնորոշում կարենալ տալու համար կարելի է, որ նախ եւ առաջ մենք մեզի հարց տանք, թե ի՞նչ է բնոյթը այսօր երկրի քաղաքական կեանքը տնօրինող յարացույցին (paradigm, պարատիպ) եւ այդ լոյսի տակ միայն փորձենք գնահատական տալ կառավարական դաշինքին ներս մեր կուսակցությունն ներկայ դերակատարությունն եւ ապագայ անելիքին:

Հաստատուած իրողութիւնն է, որ Դաշնակցութիւնը առաջնորդող հանդիսացաւ սահմանադրական փոփոխութիւններու փաթեթի հետապնդման գործին մէջ: Մենք այդ մէկը բրինձ նախագահ Սերժ Սարգսեանի ամբողջական աջակցութեամբ:

Իրականութեան մէջ, այն օրէն ի վեր, որ նախագահ որոշեց իր հովանաւորութիւնը ընծայել այս գործին եւ նախաձեռնեց սահմանադրական փաթեթի ձեւաւորման աշխատանքին, ծրագրեր գործնականօրէն դուրս եկաւ մեր ձեռքէն, եւ ան իւրացուեցաւ նախագահին կողմէ՝ որպէս գործադիր իշխանութեան առաջնահերթութիւն: Նոյնքան շահեկան է այն փաստը, որ սահմանադրական փոփոխութիւններու այս շարժումը ոչ մէկ դժգոհութիւն յառաջացուց երկրի օլիգարխներու եւ մենաշնորհի տէրերու շրջանակին մէջ: Քաղաքական բեմը չարեւոյնեցաւ երբեք: Չկար որեւէ խլրտում: Որեւէ հրապարակային լուրջ առարկութիւն: Ինչո՞ւ: Միթէ այդ մարդիկ չէին հասկնար, թէ ի՞նչ կը կատար-

ուէր իրենց շուրջ: Միայն մե՞նք էինք երկրի զգօն քաղաքացիները: Բնականաբար՝ Ո՞չ:

Անոնք հաստատ համոզուած էին, որ սահմանադրական այս փոփոխութիւններով յարացույցի փոփոխութիւն տեղի պիտի չունենար, իսկ մենք իրաւամբ դրօշ պարզած էինք յարացույցի (եւ անշուշտ՝ տիրող համակարգի) փոփոխութեան դատը մերը ընելով եւ զայն դնելով մեր ազգային օրակարգին վրայ:

Այժմ յստակօրէն կը տեսնենք, որ Հանրապետական կուսակցութիւնը այս հարցին մօտեցած էր յատուկ ռազմավարութեամբ: Ան սահմանադրական փոփոխութիւններու իր օրակարգին համար կենսական կը նկատէր խորհրդարանին մէջ միահեծան ուժ ըլլալու պայմանը: Առանց այս պայմանին՝ նոր սահմանադրութիւնը կը խոստանար յարացույցի շեշտուած յեղաշրջում յառաջ բերել, եւ այդ մէկը բնականաբար կը սպառնար օլիգարխիայի շահերուն: Հանրապետական կուսակցութիւնը ամէն գնով նուաճեց այդ նշանը, որուն շնորհիւ ան այժմ կը յաջողի առնել յաջողք քայլը: Շուտով Հայաստանի նախագահի վարչապետացումով վերջնականօրէն կ'ամրագրուի մէկ հիմնական երաշխիք: Նախկին նախագահական համակարգը հանգիստ կը տեղաւորուի նոր սահմանադրութեան դրոյթներուն մէջ: Եւ անոր հետեւող օրէնսդրական գործընթացը ի վերջոյ կ'ընայ վերածուիլ այս հողմայթը մշտնջենաւորող գործիքի:

Պարզ խօսքով, ներկայի յարացույցը

կը շարունակէ մնալ այն, ինչ որ էր: Այսինքն նոյնը: Այսինքն՝ էութեամբ նախագահական կառավարչաձեւ մը՝ այս վերջինէն բխող քաղաքական մշակոյթի էական գործօններով:

Այս առումով, պէտք է գարմանալ, որ այսօր տեղի կ'ունենայ վերջին կերպարանափոխութիւնը: Նախագահ Սերժ Սարգսեան «կ'առաջադրուի» որպէս վարչապետի թեկնածու: Այսինքն թեկնածու կը դառնայ գործող յարացույցի ամէնէն հարգաւոր ներկայացուցիչը՝ միաժամանակ վարչապետի ընտրութեան խորհրդարանական գործընթացը վերածելով պարզ ձեւականութեան: Ասիկա նկարագրուած հողմայթին, որ եթէ յանկարծ ուրիշ անուն մը առաջադրուէր, պէտք էր, որ կասկածի տակ առնէինք պատահածը եւ դիմակազերծ ընէինք նմանօրինակ բեմադրութիւնը:

Այս բոլորէն ետք կարելի է, որ հարց տանք: Պէ՞տք է այնուամենայնիւ փոփոխութիւններ ակնկալել ապագայ վարչապետ Սերժ Սարգսեանի վարչակարգէն, որուն մաս պիտի կազմէ նաեւ Դաշնակցութիւնը: Ես կը կարծեմ, որ իրապաշտ ակնկալութիւն է համակարգի «արդիականացման» որոշ քաղաքականութիւն նախատեսել նոր կառավարութեան: Կասկած չունիմ, որ կան շարք մը բաներ, որոնք պէտք է փոխուին եւ ապահովաբար պիտի փոխուին, եւ Դաշնակցութիւնը (որպէս դաշինքի անդամ) պիտի սատար հանդիսանայ այդ գործընթացին: Եւ սակայն ես դիտմամբ չա-

կերտեցի արդիականացումը, քանի որ կը կարծեմ, որ ան ընդհանրապէս պիտի մնայ մակերեսին վրայ: Այս յարացույցի դարբինները աւելին չեն կրնար տալ մեր երկրին: Անոնք կը հաւատան այն մաքրավելական օրէնքին, որ կ'ըսէ, թէ՛ «իրականութիւնը պէտք է փոխուի, որպէսզի ան մնայ նոյնը»: Հետեւաբար իրենցմէ ծնող արդիականացումը պիտի չըլլայ խորքային: Ան պիտի չըլլայ համակարգային: Ան հիմնական լուծում պիտի չբերէ արտագաղթի հարցին: Ան պիտի չզգատազրէ տնտեսութիւնը մենաշնորհային համակարգի տիրապետութեան: Ան պիտի չկարողանայ ստեղծել անհրաժեշտ թիւով իրական աշխատատեղեր: Ան պիտի չկարողանայ ծնունդ տալ որակաւոր տնտեսական աճի: Դատելով վերջին բազմաթիւ տարիներու փորձէն՝ մենք ստիպուած ենք թերահաւատ ըլլալու բոլոր այս հրամայականներու կապակցութեամբ եւ անշուշտ ի սրտէ կը մաղթենք սխալած ըլլալ: Հիմնուած անցեալի փորձին վրայ, Հանրապետական կուսակցութիւնը իր այսօրուան մեծամասնական դիրքերէն ի վիճակի է այդ ոստիւնը իրագործելու:

Այդ բանը պիտի ընէ Դաշնակցութիւնը: Ես համոզուած եմ, որ Դաշնակցութիւնը չի կրնար լճանալ այս յարացույցին մէջ եւ անոր հետ: Մեր երկիրը ի վերջոյ պիտի յաղթէ ինքզինքին եւ մենք պիտի ըլլանք այդ վճռական կռիւլը առաջնորդողը:

ԿԱՐՕ ԱՐՄԵՆԵԱՆ

**Linda Kharaboyan** Notaire  
Notary

Ձեր կոտորակն և իրաւաբանական հարցերն ու ծրագրերը վստահեցէ մեզի

Vos affaires. À cœur.

**Therrien Couture** 3111, boul. Saint-Martin O., #500  
Laval (Québec) H7T 0K2  
t. 450 682.5514 - 855 633.6326  
linda.kharaboyan@therriencouture.com  
therriencouture.com

**VIZUALIS**  
optométriste

**DR SHANT DONABEDIAN**

Centre d'Achat Fairview - Fairview Mall  
Pointe Claire  
514 695 2555 - VIZUALIS.CA

**PHOTO Cristal**

(514) 744 4313

Mariage - Portrait - Graduation  
Restauration - Commercial - Passeport  
Publicité - Lamination - Encadrement  
Video - Reproduction

647 Boul. Decarie  
V.L. Montreal QC  
H4L 3E3

photocrystal@hotmail.com  
www.photocrystal.com

**Assura Bien inc.**  
Cabinet en assurance de dommages et de services financiers

Ապահովագրական գրասենյակ

**KRIKOR ABRAKIAN** **VAHAN MATOSSIAN**

970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7  
T: 514.903.3999

**RITA BAGHDASSARIAN**  
Conseillère en Sécurité Financière  
Revenu Garantie Viager

COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELL) • CRÉATION D'HÉRITAGE •  
REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ •  
ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE  
& COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT

3820, boul. Lévesque Ouest, Bureau 101,  
Laval Qc. H7V 1E8  
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262  
ritabagh@yahoo.com

**TAXI MIRABEL**  
450-430-2650

Taxi Mirabel Հայկական հաստատութիւնը կարիքը ունի  
20 հայ թաքսի վարորդի Միրապլ շրջանին մէջ:  
Հաճեցէք հեռաձայնել Արային (514) 979-1317 քիւին:

Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number,  
besoin de chauffeur de taxi. **Call/Appelez: (514) 979 1317**

**RE/MAX**  
RE/MAX 3000 inc.  
Agence immobilière

**Elie Berberian**  
Courtier immobilier | Real Estate Broker

**C 514.519.3543**  
**B 514.333.3000**

**ONGLES CAROLE HAMPARTSOUMIAN**

POSE D'ONGLES  
RÉSINE ET POUDRE  
MANICURE & PÉDICURE AVEC GEL  
RECOUVREMENT SUR ONGLES NATURELS

Առողջ եղունգներու խնամքի համար հեռաձայնել՝  
514 941-0014 LAVAL

**KRIKOR MAROUNIAN RLU**  
Independent Financial Security Broker

Life Insurance • Disability & Critical Illness Insurance  
Group Insurance • Pension Plans  
Travel/Visitor Medical Insurance

11820 General Giraud  
Montreal, QC H4J 2H6

Res: (514) 332-7021  
Fax: (514) 332-7376  
Cell: (514) 927-2666

krikormar@gmail.com

**FIVE STAR ELECTRIQUE**  
CINQ ÉTOILES

SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING  
RESIDENTIAL-COMMERCIAL

**BEDROS NALPATIAN**

442, LA RIVIÈRE, LAVAL, QC.  
TEL: 514-497-5155 FAX: 450-689-3997  
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM

**CENTUM**  
Metrowest Wealth Solutions Inc.  
License # 12147

Mortgage programs for new comers to Canada  
New purchases  
Refinancing  
Second mortgages  
Self employed  
Low credit score  
Access to top lenders including private lenders

**SOSIE DERNERSESSIAN**  
MORTGAGE AGENT  
LICENCE #M12001830  
716 Gordon Baker Road,  
Unit 204A, Toronto  
Ontario M2H 3B4

416.662.6650 cell  
centum.ca/sosie\_dernersesian

**ALINE BEKEREJIAN**  
NOTAIRE - NOTARY

180, rue Fleury ouest  
Montréal, Qc, H3L 1T5

T 514.382.7222  
F 514.381.1818

aline.b@notarius.net  
www.abnotaires.com

Լոտար Եւ Իրաւաբանական Խորհրդատու՝ Ալին Գեքերեճեան

# Երեւանի Ֆրանսայի Հրապարակին վրայ ցուցեր. Հանրահաւաքի մասնակիցները մտան հանրային ձայնասփիւռի կայան



Շաբաթ, 14 ապրիլին Երեւանի Ֆրանսայի Հրապարակին վրայ Քաղաքացիական պայմանագիր կուսակցութեան ղեկավար Նիկոլ Փաշինեան, կազմակերպած էր հանրահաւաք մը, որ կը կրէր «Ընդդէմ Սերժ Սարգսեանի վարչապետացման» խորագիրը:

Նոյն օրը երթի մասնակիցները մտան Հանրային ձայնասփիւռի կայան, ուր կուսակցութեան առաջնորդ Նիկոլ Փաշինեանը հանդէս եկաւ ուղերձով:

Ուրբաթ, 13 ապրիլին հանրահաւաքը կազմակերպուած էր Երեւանի Ազատութեան Հրապարակին վրայ, իսկ հանրահաւաքէն ետք փակելով Ֆրանսայի Հրապարակին կից փողոցները, Նիկոլ Փաշինեանն ու իր կողմնակիցները գիշերած էին այնտեղ:

Ապրիլ 16-ի առաւօտեան կանուխ ժամերէն Երեւանի դանազան փողոցները փակուած են «Ելք» խմբակցութեան ղեկավար Նիկոլ Փաշինեանի եւ երիտասարդ քա-

ղաքացիներու կողմէ, որոնք 4-րդ օրն ըլլալով կը կազմակերպեն «Ընդդէմ Սերժ Սարգսեանի վարչապետացման» խորագիրը կրող երթեր եւ հաւաքներ:

Ապրիլ 16-ի դրութեամբ ոստիկանական ուժեր ներկայ եղած են Երեւանի Բաղրամեան-Պոռչեան հատուածին մէջ, ուր ցուցարարները կանուխ ժամերէն փակած էին Բաղրամեան պողոտայ տանող բոլոր փողոցներուն մուտքերը, ինչպէս նաեւ Մաշտոցի պողոտայ տանող բոլոր մուտքերը: Փակուած են նաեւ Սարեան, Երիտասարդականէն դէպի Արտվեանի պուրակ, Արտվեան-Կորիւն խաչմերուկը, Մոսկովեան եւ Բաղրամեան փողոցներու մէկ հատուածը:

Այդ ընթացքին Նիկոլ Փաշինեանը յայտարարած է, որ մտադիր են հասնել Ազգային ժողովի շէնք:

Ցուցարարները ներխուժած են Բժշկական յենակէտային քոլեճ եւ կոչ ուղղած ուսանողներուն՝ միանալու իրենց:

Նշենք, որ 15 ապրիլին Նիկոլ Փաշինեանը կոչ ուղղած էր երկուշաբթի օրը անդամաւորուծելու երթեւեկը Երեւանի կամուրջներուն, փողոցներուն եւ մեթրոյին մէջ:

Միւս կողմէ, Հայաստանի Հանրապետութեան ոստիկանութիւնը յայտարարած է, որ խաղաղ, սակայն հասարակական կարգի խմբային խախտումներով ուղեկցուող հաւաքի իրաւունքը բացարձակ չէ եւ կրնայ ենթարկուել սահմանափակումներու՝ իրավիճակէն բխող համաչափ ոստիկանական գործողութիւններով՝ մինչեւ հաւաքի դադրեցման որոշման ընդունում: Օրուան ընթացքին ոստիկանութիւնը պահանջած է անմիջապէս դադրեցնել հաւաքները, այլպէս ուժ եւ յատուկ միջոցներ պիտի կիրարկէ:

Ոստիկանութեան եւ ցուցարարներուն միջեւ բախումներ տեղի ունեցած են, որոնց պատճառով «Նայիրի» բժշկական կեդրոն տեղափոխուած են Նիկոլ Փաշինեանն ու 3 ոստիկաններ:

Կարճ ժամանակ անց Ազգային ժողովի պատգամաւոր, Քաղաքացիական պայմանագիր կուսակցութեան ղեկավար Նիկոլ Փաշինեանը դուրս եկած է «Նայիրի» բժշկական կեդրոնէն եւ ուղղուած է դէպի Բաղրամեան պողոտայ:

Օրուան ընթացքին Հայաստանի Հանրապետութեան առողջապահութեան նախարարութիւնը յայտարարած է, թէ կէսօրէ ետք, ժամը 4:30-ի դրութեամբ Երեւանի բժշկական հաստատութիւններ բժշկական օգնութեան համար դիմած են 46 քաղաքացիներ, որոնցմէ 6-ը ոստիկաններ:

Երեկոյան ուշ ժամերուն վերջ գտաւ Նիկոլ Փաշինեանի եւ իր համակիրներուն հանրահաւաքը, սակայն կազմակերպիչները շարունակեցին գիշերել Ֆրանսայի Հրապարակին վրայ: Կը նախատեսուի, որ բազմամարդ ցուցերով շրջափակուի Ազգային ժողովը վարչապետի ընտրութեան նիստի ընթացքին՝ արգիլելու համար, որ պատգամաւորները հասնին խորհրդարան:

## «Հորիզոն» ներկայ գտնուեցաւ Գանատայի համայնքային մամլոյ խորհուրդի ժողովին

Ապրիլ 9-ին Թորոնթոյի մէջ կայացած Գանատայի համայնքային մամլոյ խորհուրդի պաշտօնական նիստի պատուոյ հիւրն էր Թորոնթոյի քաղաքացիական ձոն Թորի, որ հիւրընկալուած էր խորհուրդի նախագահ Թամար Սարասի կողմէ: Նիստի աւարտին, «Հորիզոն»-ի աշխատակից ժառ Կարպետեան քաղաքացիական յանձնեց «Հորիզոն»-ի վերջին թիւը:



Նշենք, որ «Հորիզոն» 2004 թուականէն ի վեր անդամ է Գանատայի համայնքային մամլոյ խորհուրդին (The National Ethnic Press and Media Council of Canada-NEPMCC) եւ իր ներկայացուցիչով կը մասնակցի Council-ի ժողովներուն:

 <p><b>Aline Shnorhokian</b> Mortgage Advisor</p> <p>Tel: 1 866 231-8876 Fax: 450 688-7555 Cell: 514 797-1375 aline.shnorhokian@cibc.com</p>	 <p>Albert Arkilianian Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker</p> <p>aaarkilianian@sutton.com Cell: 514.962.8822 Bur: 514.426.9595 Fax: 514.426.9596</p>	 <p><b>KEVORK ASADOURIAN</b> Directeur des ventes - usagé Sales Manager - Pre-Owned</p> <p>kasadourian@gabriel.ca</p> <p>7000, Henri-Bourassa E., Anjou (QC), H1G 6C4 Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967 www.nissangabriel.com • www.hondagabriel.com</p>
 <p><b>École De Conduite</b> Driving School</p> <p>Tel: 514-336-1110</p> <p>Moniteur-Instructeur AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM 1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II</p>	 <p>Personal &amp; Corporate Tax Returns Financial Statements Bookkeeping Business Plan</p> <p><b>NATALIE SKAFF, CPA, CGA</b> Comptable Professionnelle Agréée   Chartered Professional Accountant</p> <p>nat.skaff@gmail.com Tel. (514) 963 3363 2866 Rue De Chamonix Saint-Laurent, Québec H4R 3B7</p>	 <p><b>BRING YOUR OWN WINE</b></p> <p>550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6 Tel: 450.937.4064 Email: resto.nazareth@hotmail.com</p>
<p><b>SAMUEL TOPALIAN</b> 450 682-1644</p> <p><b>AUTO SAMSON</b></p>  <p>MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE SERVICE DE PNEUS MISE AU POINT</p> <p>4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.</p>	 <p><b>ՀԱՅԿ ԿԱՐՏՈՒՆԻԱՆ</b> Hayk Hartounian Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker</p> <p>C 514.574.6162 B 514.333.3000</p>	 <p><b>NETTOYEUR MARIE-CLAIRE</b></p> <p>CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL)</p> <p>2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830</p>

«Փոքրերու պատմութեան ժամ»



Ուրբաթ, 16 Մարտ 2018-ին տեղի ունեցաւ Համազգայինի «Սանահին» մասնաճիւղի «Փոքրերու պատմութեան ժամ»-ի հանդիպումը: Շուրջ 20 փոքրիկներ ներկայ գտնուեցան հասարակական կենտրոնի մասնաճիւղին:

Փոքրիկները վրայ տեղաւորուելէ ետք, փոքրիկները մեծ հետաքրքրութեամբ ունկնդրեցին Զատիկուան տօնին առթիւ ընկճ. Փաթաբաքալուի կողմէ հայերէնով պատմուած, հեղինակ Wong Herbert Yee-ի «Little Rabbit's Tale»-ը:

Պատմութենէն ետք Զատիկուան պատկերներով «Bingo»-ի բացիկներ բաժնուեցան պատկերներուն: Պատմողին պատկեր մը յայտարարելէն ետք, փոքրիկները ուշադրութեամբ եւ լուրջ կեդրոնացումով պինկոյի բացիկը ուսումնասիրելէ ետք, իրենց ձեռքերը վեր կը բարձրացնէին, եթէ յայտարարուած պատկերին նմանը ունէին: Այդ պարագային պատմողը նշան մը կը բաժնէր, զոր փոքրիկները կը տեղաւորէին «Bingo»-ի բացիկին վրայ, համապատասխան տեղը: Այսպէս մինչեւ որ ուղղահայեաց, հորիզոնական կամ շեղակի կարգ մը ամբողջացնեն:

«Bingo»-ի խաղէն ետք, իւրաքանչիւրին տրուեցաւ ներկելիք էջ մը, որուն վրայ գծուած էր նապաստակի մարմինի մասերը:

Հետաքրքրական էր տեսնել փոքրիկներու կեդրոնացումն ու ուրախութեան արտայայտութիւնները իրենց գէմքին վրայ, երբ «Bingo»-ի բացիկը կ'ամբողջացնէին: Անգամ մը եւս հաճելի մթնոլորտի մը մէջ աւարտեցաւ «Փոքրերու պատմութեան ժամ»-ի այս հասարակական խաղը:

Ձեր երեխաներն ու թոռները կրնան ընկերակցել մեզի եւ իրենց մասնակցութիւնը բերել մեր ճոխ յայտարարին, հեռաձայնելով Մեղրիին՝ 514-826-1075, կամ գրելով հետեւեալ ե-հասցէին. megho7@hotmail.com:

Ռոզմարի Սահակեան «Փոքրերու պատմութեան ժամ»-ի վարչական ներկայացուցիչ

«Սիրուհին ու անձանօթը»



Մոնթրէալի գանազան թատերական ձեռնարկներու շարքին, 7 Ապրիլ 2018-ի երեկոյեան, Vanier College-ի թատերասրահին մէջ, առիթը ունեցայ ներկայ գտնուելու «Մոնթրէալահայ թատերասէրներ» թատերախումբի ներկայացուցած անգլիացի թատերագիր Ռէյ Գունթի «Սիրուհին ու անձանօթը» գործին բեմականացման: Բեմի վարագոյրին բացուելէն առաջ, բեմագրիչ տիկ. Ռոզալիա Էվերեկեան Վասիլեան յայտարարեց, թէ այս գործը նուիրուած է իր հօր, թատրոնի երկարամեայ երախտաւոր գործիչ ու բեմագրիչ Դաւիթ Յ. Էվերեկեանի յիշատակին:

Կ'ուզեմ անդրադառնալ եւ տպաւորութիւններս արձանագրել, իբրեւ թատրոնի սիրահար:

Մօտաւորապէս երկու ժամ տեւողութեամբ այս կատակերգութիւնը, օղակի մը նման եւ ծիծաղաշարժ կերպով հրամցուց ամուսնական կեանքի անհաւատարմութիւն, ստախոսութիւն, կառավարական մարդոց անպարկեշտ ու անտարբեր կեցուածք եւ բարեկամական միամիտ մեղսակցութիւն: Այս գաւելալը առաջին իսկ վայրկեանէն, վարակիչ ու անզուսպ խնդուք յառաջացուց հանդիսատեսին մօտ եւ արժանացաւ բոլորն ծափահարութեան:

Ընտրուած թատերախաղը երկու արարով, շատ պարզ ու ճաշակաւոր բեմայարդարումով ներկայացում մըն էր:

Դերակատարներէն շատեր խոստմանալից ուժեր են, իսկ ոմանք իւրացուցած էին իրենց վստահուած դերը ամբողջութեամբ, հիմնուելով խօսքի, առողջանութեան, շարժումներու ու գէմքի արտայայտութեան: Բոլորն ալ Դաւիթ Էվերեկեանի պատրաստած դերակատարներ են, որոնք ունին անսահման սէր թատրոնի հանդէպ:

Գաղութը ծարաւը ունի թատերական ներկայացումներու: Որքան որ քանակը կարեւոր է, նոյնքան ու աւելի որակն է պէտք: Երախտապարտ ենք բոլոր անոնց, որոնք իրենց շունչն ու հոգին դրած են ի սպաս թատերական մշակոյթին:

Սօսի Գրիգորեան Դանիէլեան

«Հորիզոն»ի Մանկապատանեկան յաւելուածի խմբագրակազմի հանդիպում



Կիրակի, 15 Ապրիլ 2018-ին, «Հորիզոն»-ի խմբագրատան մէջ տեղի ունեցաւ «Հորիզոն» Մանկապատանեկան խմբագրակազմին հանդիպումը, գլխաւորութեամբ «Հորիզոն» շաբաթաթերթի վարիչ խմբագիր Վահագն Գարագաշեանի:

«Հորիզոն» Մանկապատանեկան յաւելուածի խմբագրական կազմի անդամներն են. գլխաւոր խմբագիր տիկին Սոնա Թրիթիգեան Կէտիկեան, տիկին Անահիտ Պալեան, որ 5 տարիէ ի վեր որպէս խմբագիր կ'աշխատակցի Մանկապատանեկանին, Սուրբ Յակոբ Ազգային Վարժարանի շրջանաւարտ աշակերտուհիներ՝ Թալիա Ծապրայեան եւ Արիանէ Թապրայեան, ինչպէս նաեւ վերջերս Սուրբ Գրիգոր Գանատա ներգաղթողներ՝ Հայերէնի նախկին ուսուցչուհի տիկին Սայրի Էլէյճեան Բեկէեան եւ ուսանողուհիներ Շողիկ Սաֆար եւ Յուլիկ Բարուճեան:

Հանդիպումին ընթացքին խմբագիր Վահագն Գարագաշեան անդրադարձաւ «Հորիզոն» Շաբաթաթերթի պատմականին եւ լրատուական գետնի վրայ տարուած աշխատանքներուն: Ան նաեւ նշեց, թէ Մանկապատանեկան յաւելուածը 25 տարիէ ի վեր լոյս կը տեսնէ շնորհիւ Գանատայի ՀՕՄ-ի Շրջանային վարչութեան եւ ՀՕՄ-ի մասնաճիւղերուն ներդրումին եւ ճիշտաբար կը բաժնուի Մոնթրէալի Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի, Թորոնթոյի ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարանի, Թորոնթոյի Հայ կաթողիկէ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Շաբաթօրեայ վարժարանի, Վանապրիլի ՀՕՄ-ի «Արագ» Շաբաթօրեայ վարժարանի եւ Գեմալրիճի ՀՕՄ-ի «Մ. Թրիթիգեան» Շաբաթօրեայ վարժարանի աշակերտութեան:

Փողովին ընթացքին քննարկուեցան Մանկապատանեկան յաւելուածի յառաջիկայի ծրագրերը:

Advertisement for Ghadir Meat & Restaurant. Includes phone numbers (416-750-7404, 416-750-7400) and address (1848 Lawrence Avenue E, Scarborough, ON M1R 2Y4).

Advertisement for ANI Bakery and Fine Foods. Includes location (2094 Lawrence Avenue East) and hours (Open 7 days a week).

Advertisement for Noor Fine Food. Includes address (1 High Meadow Place, Unit 9, Toronto) and contact info (Tel 416 745 3111).

Advertisement for ANI Restaurant. Includes phone number (905.761.6484) and address (1450 Clark Ave. West, Thornhill).

Advertisement for Sutton Group-Admiral Realty Inc. featuring Annie Varbedian, Sales Representative. Includes phone numbers and website.

Advertisement for hearing aid source. Features Andre Ayvazyan, HIS B.A.S. Includes contact info and address (Parkway Mall, 85 Ellesmere Rd.).

Advertisement for Crown Pastries. Includes phone number (Tel 647.351.2015) and website (www.crownpastriesbaklava.com).

Advertisement for I.D.A. Pharmacy Inc. featuring Cassandra. Includes address (2040 Victoria Park Ave.) and phone numbers.

Advertisement for ANI BAKERY. Includes phone number (Tel: 416.285.7164) and address (25 Howden Road, Unit #2).

# Տաճկահայ Գաղթաշարժը Եւ Անոնց Դերը Հայաստանի Հանրապետութեան Կազմութեան Մէջ - ԺԴ.

## Մեծ Նահանգը - 5

Թուրքերը գլխաւորաբար ինուսի եւ Մալազկերտի ճանապարհներով շարունակեցին իրենց յառաջնադարը եւ հասան մինչեւ Խըլիճ-Գէտիկ, մինչեւ Ալաշ-կերտի դաշտը: Թուսական բանակը կրցաւ կասեցնել թրքական առաջապահ ուժը: Բասէնէն Զօր. Բարաթով Դէլի-Բարալի կողմէն կողքէն հարուածեց թրքական գլխաւոր ուժերը եւ պարտութեան մատնեց զանոնք: Թուսական բանակը մէկ ամսէն յետոյ արդէն վերագրուած էր Եփրատի հովիտը եւ Մալազկերտի քաղաքը:

Վանը միայն չաբաթ մը մնաց թուրքերու ձեռքը: Թուսական բանակի առաջապահները վերագրաւեցին քաղաքը, այս անգամ առանց հայերու: Բերկրիի ճանապարհը բացուեցաւ: Ալաշկերտի շրջանի ժողովուրդը, որ մասամբ տեղահան եղած էր, դարձաւ ու տիրացաւ իր շէնութիւններուն: Արամ շարք մը գործակիցներու հետ փութաց դէպի Վան Պարսկաստանի կողմ գացող Վանի ժողովրդէն, տղամարդիկ իրենց քայլերը ուղղեցին դէպի Վանի սիրուն լիճը: Սակայն, մեր չար բաղդէն, Վանի մէջ ռուսական զօրամասը նոր նահանջ մը եւս սարքեց: Արամ ստիպուեցաւ ետ դառնալ Երեւան: Հազիւ շաբաթ մը տեւեց այդ խաղը: Վանը նորէն վերագրուեցաւ եւ մնաց ռուսական տիրապետութեան տակ մինչեւ 1918-ի գարունը: Բայց 1915-ի ամրան մեծ եւ փոքր նահանջները մեծապէս յուսալքեցին Վանի հասարակութիւնը: 1915-ի աշնան Վանը մնաց առանց Արամի: Հոն հաւաքուեցան միայն քիչ թուով տղամարդիկ եւ ինքնապաշտպան քանի մը խմբակներ, եւ միայն յետագայ տարուայ ընթացքին կամաց կամաց շէնցաւ Վանի շրջանը: Այդուհանդերձ Վանի նահանգի հայ ազգաբնակչութեան խոշոր մեծամասնութիւնն այլեւս չկրցաւ դառնալ իր սիրած Վանը, եւ մնաց զրուած Հայաստանի, Կովկասի եւ Թուսաստանի զանազան վայրերու մէջ:

Կամաւորական գունդերը կը վերակազմուէին, ձմեռուայ գործողութիւններուն մասնակցելու համար: Ընդհանուր սրտաբեկում մը կար: Տեղահանութեան եւ ընդհանուր կոտորածներու լուրերը հասած էին: Միւս կողմէ, Տարօնի շրջանէն փոքրիկ խումբեր, ռուսական նահանջէն վերջ, դիմադրական բոլոր միջոցները սպառելէն յետոյ, կը դիմէին դէպի Կովկաս: Առաջին խումբը Մատթէոսի (որու Յուշերը լոյս կը տեսնեն «Հայրենիք» Ամսագրի մէջ) ղեկավարութեամբ, եօթ հոգի, Քանէն ճանապարհ կ'ելնեն, յոյս ունենալով որ Բուլանուխի կամ Մալազկերտի մէջ պիտի կրնան հանդիպիլ ռուսական բանակին: Մինչդեռ այդ ատեն ռուսական բանակը քաշուած էր Ալաշկերտ: Այդ խումբը կը կոտորուի ամբողջութեամբ Մալազկերտի լեռները չանցած: Մատթէոս ճանապարհ ելած էր Վ. Փափագեանի կարգադրութեամբ, ու կուգար օգնութիւն խնդրելու: Երկրորդ խումբը, քանի մը հոգի, Բուլանուխի Մարտիրոս վարժապետի ղեկավարութեամբ, Յրոնքի վրայով կ'անցնի Մալազկերտ, այն ատեն, երբ ռուսական յառաջապահներն արդէն վերադարձած էին հոն: Միայն


Մարտիրոս վարժապետը կրցած էր ազատիլ եւ վիրաւոր վիճակով հասած էր ռուսական բանակ ու փոխադրուած Երեւան: Անիկա կը նկարագրէր կոտորածները, շարունակուող տասնեակ հազարներու անուէնով օգնութիւն կը խնդրէր Տարօնի համար:

Այս օգնութեան կոչերը պահ մը կը ցնցէին ղեկավար շրջանակները, որոնք սթափուելով նահանջի եւ գաղթականական հոսանքի ընդհանուր շարժումներէն, կ'ուզէին դիմել սեփական միջոցներու, զինեալ ուժով մը օգնութեան հանելու Սասնոյ լեռներու վրայ ապաստանած կռուող ժողովրդին:

Դրոն ընդառաջ եկաւ ծրագրի մը, որ խորհրդակցութեան նիւթ դարձած էր փոքր շրջանակի մը մէջ: Ծրագրերը հետեւեալն էր: Կազմել 200-300 ճիւղեր խումբ մը եւ Մալազկերտէն անցնիլ եւ շեշտակի հարուածով մտնել Մշոյ դաշտ ու միանալ Քանի ուժերուն, որպէսզի կարելի ըլլար աւելի հոծ բազմութեամբ ճեղքել թրքական բանակը եւ վերադառնալ Մալազկերտ: Այդպիսի արշաւանքի մը համար, հարկաւոր էր Զօր. Օգանովսքու արտօնութիւնը: Այդ մասին դիմում եղած էր եւ անիկա իր համաձայնութիւնը տուած էր: Դրոն ձեռնարկեց արագօրէն կազմակերպելու այդ առանձին ուժը, որ բացառաբար ձիւղերն էր բաղկացած պիտի ըլլար: Հազիւ 150 ձիւղերն էր կրցանք ունենալ այդ նպատակի համար: Ես ջերմ կողմնակից էի այդ ձեռնարկին, եւ քանի մը ընկերներով եւ Մշեցի ու Սասունցի զինուորներով միացանք Դրոյի խումբին:

Դրոյի ձիւղեր զօրամասը Ալաշկերտ հասած էր եւ քանի մ'օրէն պիտի մեկնէր Մալազկերտ: Այդ օրերուն պարզուեցաւ այն պարագան, որ ռուսական բանակի առաջապահները կը մնային միայն Մալազկերտ. իսկ անկէ անդին թրքական բանակը ամուր նստած էր: Այդ առաջին կէտէն մինչեւ Քան (Սասնոյ լեռնաշղթան), մօտ 120 քիլոմէթր էր, տարածութիւն մը, որ շատ դժուար էր կարել անցնիլ մէկ օրուայ ընթացքին: Երկրորդ պարագան Ալատաղի եւ Զիլանի քրդերու թիկունքային գործունէութիւնն էր: Անոնք քաջալերուելով Բերկրիի կոտորածէն եւ կողոպուտէն, սկսած էին աւելի խիզախ շարժումներ ընել ոչ միայն դէպի Բերկրի եւ Աբաղա, այլ նաեւ դէպի Ալաշկերտի դաշտը, եւ դէպի Մալազկերտ տանող ճանապարհները: Այսպիսով հերթական գործ մը դարձաւ թիկունքն ապահովելու խնդիրը:

Զօր. Օգանովսքին համաձայնեցաւ արշաւանք մը կատարել Ալատաղի վրայ, եւ տրամադրեց 250 զօղաքներ Գնդ. Կարէլքովի ղեկավարութեամբ: Դրոն իր ձիւղերը գործադրող ստանձնեց արշաւանքի ղեկավարութիւնը: Այսպիսով, Մալազկերտ մեկնելու խնդիրը քանի մը շաբաթուայ համար յետաձգուեցաւ, ու մենք մեկնեցինք դէպի Ալատաղ: Արշաւանքը սկսաւ սեպտեմբերին. ուժերը մեկնեցան Դիտարինէն, որ կը գտնուի Ալատաղի ստորոտը, Ալաշկերտի դաշտի մէջ: Արշաւանքը տեւեց մէկ շաբաթ: Քրդական գիւղերը շատ փոքր դիմադրութեանէ յետոյ տեղի տուին: Քանի մը թիկերու



բաժնուած պատմիչ զօրամասերը կրցան օղակել բազմաթիւ գիւղեր եւ հայրախններ եւ ընկճել դիմադրութիւնը: Վերջին կուր տեղի ունեցաւ Ալատաղի գաղթութիւն վրայ: Կէս ժամուայ դիմադրութիւն միայն կրցան ցոյց տալ քրդական անկանոն ուժերը: Կամաւորները գրաւեցին վերջին բարձունքը, որ մօտ 12,000 ոտնաչափ բարձր է: Անոնք որ կրցան փախչիլ, վար եկան եւ անցան Զիլանի ձորը, որ Ալատաղի արեւելեան հարաւը կ'իյնայ, ճիշդ Արճէշի դիմացը: Մնացեալ բոլոր տղամարդիկ, որպէս դիմադրողներու ինկան կուռի ընթացքին: Կանանց եւ երախաներուն խնայուեցան, սակայն անոնք ալ քշուեցան Զիլանի ձորը:

Այսպիսով, քրդեր իրենց տգիտութեան եւ կողոպուտի սիրոյն, գործիք մնացին թրքական կառավարութեան ձեռքը, չարիք նիւթեցին հայերու համար, ու իրենք ալ ենթարկուեցան աւերումի: Մօտ 40 գիւղ եւ հայրախ ոչնչացան: Տասնեակ հազար քրդեր բնաջնջուեցան, քաւելով երկու ամիս Բերկրիի իրենց նախնիքը:

Արշաւող բանակը զինուորական գրաւման ենթարկեց աւելի քան 40,000 խոշոր գլուխ անասուններ, ինչպէս նաեւ ձիեր եւ բազմահազար ոչխարներ, որոնք շատ չնչին տոկոսով հայ գիւղացիներու գացին, մնացած ամբողջութիւնը ռուսական բանակի սեփականութիւնը դարձաւ:

Ֆիզիքական ու անտեսական այս աւերումէն յետոյ Ալատաղի քրդութեան մէջը կոտորուեցաւ: Ընչդ է որ Զիլանը միշտ մնաց անձեռնմխելի եւ տակաւին այսօր ալ ըմբոստութեան օճախ մըն է ընդդէմ թուրքերուն, սակայն Ալատաղի հոծ քրդութիւնը այլեւս գոյութիւն չունի:

Ալատաղի արշաւանքը նոր վերջացած էր, երբ Ալաշկերտ հասան Թուրքն եւ Վ. Փափագեան իրենց 35 ընկերներով: Անոնցմէ քանի մը շաբաթ առաջ, Մշեցի Պատիկ Արամի ղեկավարութեամբ 70 կռուողներ անցած էին Ալաշկերտ-Կաղզուան-Կարս: Աւելի ուշ, աշնան, Քանէն խումբ մը կռուողներ Տ. Եղիշէ Պարսամեանի հետ կ'անցնէին Մալազկերտ, ու կ'ազատուէին: Ամենէն վերջին խումբը կուգար Մ. Կարապետի անտառէն, Կոմսայ Մօսոյի, Միլիթի, Ռէպէի Սարգսի եւ Աւետիսի ղեկավարութեամբ:

Օրհասական կուր իր վախճանին հասած էր: Սեւ մշուշ մը կ'իջնէր հերոսական Տարօնի վրայ եւ մեր թեւերը կը կոտրէր: Արշաւանքի ծրագրերը այլեւս անգործնական նկատուեցաւ: 1915-ի աշունն ու ձմեռը գաղթականական շրջան մը դարձաւ: Հայ ժողովուրդն իր կորուստներու մորմոքն ապրեցաւ, բայց յետագայ տարուայ ընթացքին միայն պիտի կրնար իր ամբողջութեամբ ըմբռնել ջարդերու ահուկիւթիւնը:

ԿԱՌՕ ՍԱՍՈՒՆԻ

## Բարքերը փոխելու համար անհրաժեշտ է նախելառաց կարգերը փոխել

ՀՀ ԱԺ ՀՅԴ խմբակցութեան ղեկավար Արմէն Ռուստամեանի ելոյթը Ազգային ժողովի յատուկ նիստին՝ վարչապետի ընտրութեան հարցի ֆինարկման ժամանակ

Յարգելի՛ պարոն Սարգսեան, Մեր դիրքորոշումը Ձեզ առաջադրելու հետ կապուած հիմնաւորուած է ոչ միայն նրանով, որ դրա համար կան բոլոր անհրաժեշտ իրաւաքաղաքական հիմքերը՝ պայմանաւորուած ԱԺ ընտրութիւններին ՀՀԿ արձանագրած արդիւնքներով եւ այն հանգամանքով, որ կոալիցիա կազմաւորելու մասին յուշագրով ՀՀԿ-ին է վերապահուած վարչապետի թեկնածու առաջադրելու իրաւունքը, այլեւ նախեւառաջ նրանով, որ մենք միասին անցել ենք յուսադրող եւ մեր երկրի համար չափազանց բախտորոշ մի երկար ճանապարհ: Սակայն որ ամենակարեւորն է, ստանձնել ենք Հայաստանի եւ հայրենիքի բարեկեցիկ, ազատ ու արդար ապագան կերտելու առաքելութիւն:

Մենք միասին լաւագոյն հիմքերն ենք ստեղծել արդար Հայաստան եւ միասնական ու պաշտպանուած Արցախ ու Սփիւռք ունենալու համար:

Դրա ամենապարճաբաւ փկայութիւններն են՝ առաւել ժողովրդավարական եւ ժամանակակից մեխանիզմներով օժտուած խորհրդարանական համակարգի հիմնադրումը, որ հնարաւորութիւն է ընձեռուած արձանագրելու արդէն IV հանրապետութեան սկզբնաւորման մասին, հայ-թուրքական արձանագրութիւնների չեղարկումը եւ Համահայկական հռչակագրի ընդունումը, Արցախեան հիմնախնդրի լուծմանն ուղղուած արժա-

նապատիւ եւ հայանպաստ բանակցութիւնների իրականացումը:

Միեւնոյն ժամանակ, պարո՛ն Սարգսեան, մենք պարտաւոր ենք չթերագնահատել եւ տեսնել առաջնութեան մեր ճանապարհին առկայ խոչընդոտներն ու վտանգները:

Սկիզբ առած բարեփոխումները շարունակելու ներկայ փուլի հետ կապուած մեր գնահատականներում, մենք, ի հարկէ, առաջնորդուած ենք առկայ խոչընդոտներն ու ամարտահրաւերները յաղթահարելու մեր միասնական պատասխանատուութեան գիտակցումով:

Ըստ այդմ, օրուայ խնդիրն է չէզոքացնել առարկայական եւ ենթակայական այն բոլոր մտահոգութիւնները, որոնք բխում են հասարակութեան մէջ ձեւաւորուած կարծրատիպերից: Կարծրատիպեր, որից առաջացած չվերացող դժգոհութիւնը փորձել ու փորձելու են օգտագործել սկսուած գործընթացների քաղաքական հակառակորդները:

Այս գործընթացը վարկաբեկելու ամենատարածուած բանաձեւը «միեւնոյնն է, ոչինչ էի փոխուելու» կանխավարկածն է, որ արտայայտուած է հիմնականում հետեւեալ ձեւակերպումներով՝

— Փոփոխութիւնները ծխածածկոյթ են իշխանութիւնների վերարտադրութեան համակարգը յաւերժացնելու համար,

— Վերնախաւում անձերը նոյնն են, ուրեմն ոչինչ չի կարող փոխուել:

Այս կարծրատիպից հրաժարուելը մեր հիմնական մարտահրաւերն է:

# ARMENIAN HERITAGE CRUISE®

7 NIGHT WESTERN CARIBBEAN CRUISE! JANUARY 20-27, 2019

## AWARD WINNING ADVENTURE

Allure of the Seas®. Not only the most decorated ship in the Royal Caribbean fleet, it's won more awards than any other ship in the world.



Leaving from Miami

Roatan, Honduras  
Costa Maya, Mexico

Nassau, Bahamas  
Cozumel, Mexico



You must book with TravelGroup to attend our private Armenian events.

**BOOK NOW AS PRICES WILL BE INCREASING MAY 1, 2018!**

Rates are per person for double occupancy cabins:

Limited additional luxury suites available upon request. For pricing on triple and quad occupancy cabins, please contact TravelGroup.

Prices include Cruise, Port Charges and all AHC private events. Government tax of \$137.45 per person is additional. Prices valid through April 30, 2018. Rates and Information subject to change at any time without notice.

INSIDE CABIN	\$949
CENTRAL PARK VIEW	\$1,049
OCEAN VIEW	\$1,129
CENTRAL PARK BALCONY	\$1,239
BOARDWALK BALCONY	\$1,239
OCEAN VIEW BALCONY	\$1,409
JUNIOR SUITES	\$2,279
GRAND SUITES	\$3,479



For Reservations Contact:  
Local **561-447-0750** • Toll Free **1-866-447-0750** Ext 108 or 102  
125 SE Mizner Blvd., Suite 14, Boca Raton, FL 33432 • [AHC@travelgroupint.com](mailto:AHC@travelgroupint.com)

Call Arpi Bostajian-Ashkarian (519) 748-2672 | [arpi@bostgroup.ca](mailto:arpi@bostgroup.ca)

[www.armenianheritagecruise.com](http://www.armenianheritagecruise.com)



ՀԱՅԿԱԿԱՆ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ  
ARMENIAN GENOCIDE

24.04.18

AT 12:00-ին

ՄԻԱՍԻՆ  
TOGETHER!

OTTAWA



# Ի ՅԻՇԱՏԱԿ 1915-Ի ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 1.5 ՄԻԼԻՈՆ ԶՈՀԵՐՈՒՆ



**Francine Charbonneau**  
Députée de Mille-Îles  
Ministre responsable des Aînés et de la Lutte contre l'intimidation, Ministre responsable de la région de Laval  
450 661-3595  
fcharbonneau-mill@assnat.qc.ca

**Guy Ouellette**  
Député de Chomedey  
Président de la Commission de l'Aménagement du territoire  
450 686-0166  
gouellette-choi@assnat.qc.ca

**Jean Rousselle**  
Député de Vimont  
Adjoint parlementaire du ministre des Affaires municipales et de l'Occupation du territoire  
Adjoint parlementaire du ministre de la Sécurité publique  
450 628-9269  
jrousselle-vimo@assnat.qc.ca

**Jean Habel**  
Député de Sainte-Rose  
Adjoint parlementaire de la ministre du Développement durable, de l'Environnement et de la Lutte contre les changements climatiques  
Président de séance  
450 963 8272  
jean.habel.saro@assnat.qc.ca

**Monique Sauvé**  
Députée de Fabre  
Adjointe parlementaire du ministre de l'Emploi et de la Solidarité sociale  
450 689-5516  
monique.sauve.fabr@assnat.qc.ca

**Saul Polo**  
Député de Laval-des-Rapides  
Adjoint parlementaire du ministre des Finances  
450 668-6077  
saul.polo.lavr@assnat.qc.ca



Québec

**GOLF SOURP KEVORK**  
opération enfant soleil  
**SERVICES ET ACTIVITÉS COMMUNAUTAIRES MANTAGOUNI**

**6ème TOURNOI DE GOLF ANNUEL BÉNÉFICE**

**LE 14 JUIN 2018**  
**CLUB DE GOLF STE-ROSE**  
LES BÉNÉFICES ITRONT À  
**L'OPÉRATION ENFANT SOLEIL**  
LA COMMUNAUTÉ ARMÉNIENNE **SOURP KEVORK**  
SERVICES ET ACTIVITÉS COMMUNAUTAIRES **MANTAGOUNI**

Pour réservations Movig Topouzian 450-688-6795 moskg@sourpkevork.ca

**60-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ**

Յուրահանրությանը՝  
Գերաշնորհ Տ. Բարգին Արք. Չարեանի Առաջնորդ Փանատայի Դայոց Թեմի

Նախագահությանը՝  
Ընկ. Սիլվա Մայրոջի Գիմնադիր վարչական անդամ

Պատգամարի՝  
Ընկ. դոկտ. Լալի Մանճիկյան Եսփոսեան

**ԿԻՐԱԿԻ, 6 ՄԱՅԻՍ, 2018**  
**ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ**  
**6:00-ԻՆ**

Արք. Յակոբ Ազգ. Վարժարանի Բաստրմանյան քառերասրահէն ներս

Մասնակցությանը՝  
**TRIO DE L'ÎLE**  
Երաժշտական նրբակիւն

Մասնակցեցե՛ք 2017-ի Իրոնքրիայի «Մուն» մասնագիտի 60-ամեակի մոմուլտոս քեռն, նուիրելով \$60 նշանակելով ընկի. Վանին Գաւրտարուիանին (514) 331-2229

Տոմսերը ապահովելու համար դիմել մասնագիտի գրասենեակ՝  
(514) 335-2222  
sosse.montreal@gmail.com

**Մուտքի նուէր՝ \$20**



**Pharmacie  
Levon Benohanian et  
Mher Koubelian Inc.**  
Pharmaciens-propriétaires

3915, Boulevard Samson  
Laval, QC H7W 2G1



T 450 688-4111  
F 450 681-5525  
proximlaval@gmail.com

Lun. au vend. : 8h30 à 21h  
Sam. et dim. : 9h à 17h  
Infirmière (jeudi) : 8h30 à 15h



Անվճար սպասարկուքի ն մինչև ձեր տունը.  
Շաբաթական դեղատուփիկի պատրաստութիւն.  
Ազատ փոխադրում ձեր դեղացանկի (dossier)  
այլ դեղարանէ. Դեղերու պատուաստում  
(vaccination) հիւանդապահի կողմէ.

Բուժական հետեւում՝  
արեան բարակութեան (INR), շնչերակային  
ճնշման (tension artérielle), արեան շաքարի  
(glycémie capillaire), արեան մաղձաճարպի  
(cholesterol), եւն.

L'ÉCOLE ARMÉNIENNE  
**SOURP HAGOP**  
POSTE PRINCIPAL 5, 475, CHAMPLAIN  
DORVILLE, QUÉBEC H3A 2G4

LE BIEN-ÊTRE TOTAL POUR TOUTE LA FAMILLE  
DANSONS • BOUGEONS • VIVONS

**15\$**  
participation

Le comité de parents de  
l'École arménienne Sourp Hagop  
présente le

**BOUGE • A • THON**  
"move"

Gymnase Homenetmen Gamk Haig Markarian  
Centre Culturel Arménien de Montréal, 2437, Côte des Neiges, Montréal, QC H3T 1E5

**VENDREDI LE 4 MAI 2018 À 18H30**

**VERDUN ADULT  
& CAREER CENTRE**

**PROGRAMS OFFERED**

- Residential and Commercial Drafting  
(Diplôme d'études professionnelles (DEP))
- Plumbing and Heating  
(Diplôme d'études professionnelles (DEP))
- Computing Support and Networks  
(Diplôme d'études professionnelles (DEP))

**GROUPS STARTING SOON!**  
CALL US FOR MORE INFORMATION  
[WWW.LBP.CE.CA/VACC](http://WWW.LBP.CE.CA/VACC) | 514.798.0405

Start your new career in 16 months!

Financial Assistance is available

Diploma recognized by the  
Ministry of Education

**Where To Find Us**  
6050 boulevard Champlain,  
Verdun, QC  
H4H 1A5  
Tel: 514-798-0405

**STM** Niveau: Membre de l'Association  
Inc. 112

Հիանալի աշխարհային Գանատայի մ.թ. իրենց մասնագիտությունը  
կիրառելի ուզող կամ աշխատանքի նոր առիթներ  
փնտրող անհատներու համար

**LBP**  
Lecteur B. Pearson  
Verdun Adult and Career Centre

## ԱՅՍ ԱՆԿԻՒՆԷՆ 24 ԱՊՐԻԼԸ՝ Իրաւունքի օր

Սուգի օր էր Ապրիլ 24–ը մինչեւ Մեծ եղեռնի յիսնամեակը:

Ինչպէս բանաստեղծն ըսած էր, 1915–ին ազգի կէսը դարձաւ միւս կէսի սգակիրը: Այդ սգակրութիւնը շարունակուեցաւ սերունդէ սերունդ՝ մինչեւ 1965, շարունակուեցաւ անկէ ալ անդին:

